



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

20.546

ԿԱՆՈՆԱԳԻՐ



Ռամկավար Ազատական Կուսակցության

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇԻՋԱՆԱԿԻՆ



ՏՊԱՐԱՆ «ԱԶԳ-ՊԱՀԱԿ»Ի
ՊՈՍԹՈՆ, ՄԷՍ.

1922

329.14

Ղ-18

329.14
12-18

15 JAN 2010

05 FEB 2007

ԿԱՆՈՆԱԳԻՐ

Ռամկավար Ազատական
Կուլսակցութեան
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԱԿԻՆ



ՏՊԱՐԱՆ «ԱԶԳ-ՊԱՀԱԿ»Ի
ՊՈՍԹՈՆ, ՄԷՍ.
1922

20505

24 JUL 2013

20.546



Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Ր

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԱԿԻՆ

ԱՆՈՒՆ

Կուսակցութեան անունն է՝

Ռամկավար Ազատական Կուսակցութիւն:

ՆՊԱՏԱԿ

Ա.— Ազատութիւն եւ պահպանել պատմական
Միացեալ Անկախ Հայաստանի անկախութիւնը,

Բ.— Աշխատիլ անկախ Հայրենիքին քաղաքա-
կան, տնտեսական եւ բարոյական բարգաւաճման:

Գ.— Ծառայել ազգային քաղաքակրթութեան
մը զարգացման:

ԿԱԶՄ

Շրջանակիս կազմական բաժանումներն են.

Ա.— Տեղական ակումբներ սեփական վարչու-
թիւններով,

Բ.— Ենթաշրջանակներ սեփական ենթաշրջա-
նային վարչութիւններով,

Գ.— Շրջանային վարչութիւն,

Դ.— Շրջանային Պատգամաւորական Ժողով,

2592 - 2002

ԱՆԿԱՄԱԿՅՈՒԹԻՒՆ

307. 1. — Կուսակցութեանս կրնան անդամակցել 18 տարեկանէն վեր երկսեռ Հայեր՝ որոնք ուրիշ հայ քաղաքական կուսակցութեան չեն պատկանիր:

Ոճիրով կամ զեղծումով դատապարտուած անձեր անդամ չեն ընդունուիր:

307. 2. — Նոր անդամներ կ'ընդունուին Ակումբի Անդամական Ժողովի հաւանութեամբ եւ անոնց ներկայութեամբ կատարուած ուխտով, պատշաճ քննութեան մը ենթարկուելէ յետոյ:

307. 3. — Նոր անդամներ պարտին իրենց Ակումբին վճարել առնուազն մէկ տօլարի մուտքի տուրք մը: Իւրաքանչիւր անդամ կը վճարէ նաեւ պարտաւորիչ տուրք մը՝ տարեկան վեց տօլար:

307. 4. — Անդամատուրքէ զերծ են այն անդամները, որոնց նիւթական անձկութիւնը կը հաստատուի Ակումբին վարչութեան կողմէ: Անդամատուրքերը ամբողջութեամբ պէտք է զրկուին Շրջանային վարչութեան:

307. 5. — Իւրաքանչիւր անդամ պարտի Կուսակցութեանս գէթ մէկ պաշտօնաթերթին բաժանորդագրուել: Երբ ընտանիքի մը մէջ մէկէ աւելի ընկերներ գտնուին, մէկ բաժանորդագրութիւն բաւական պիտի ըլլայ այս պայմանը լրացնելու:

307. 6. — Իւրաքանչիւր անդամ պարտի լեցնել հարցարան մը որ կը մնայ Ակումբի ատենադպրին մօտ: Իւրաքանչիւր անդամ պարտի հնազանդի կարգապահութեան եւ զաղտնապահութեան օրէնքներուն: Անդամները կրնան ակումբէ ակումբ փո-

խադրուել իրենց վարչութեան գրաւոր յանձնարարականով:

307. 7. — Իւրաքանչիւր անդամ պարտի ստանալ անդամակցութեան քարտ մը ստորագրուած աւանդութեան վարչութեան ատենապետէն եւ ատենադպրէն եւ կնքուած ակումբի կնիքով:

307. 8. — Անդամներու խմբաւորում մը կը կազմէ ակումբ մը, որուն նուագադոյն թիւը պէտք է ըլլայ հինգ:

307. 9. — Նորակազմ Ակումբ մը օրինաւոր հանգամանք կըստանայ երբ անոր կազմութիւնը Շրջանային վարչութենէն վաւերացուի:

ԱԿՈՒՄԲԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐ

307. 10. — Ակումբի մը վարչութիւնը կընտրուի անդամներու մեծամասնութեան դադանի քուէարկութեամբ եւ իր պաշտօնը կը տեւէ մէկ տարի: Հին վարչութեան անդամները վերընտրելի են: Վարչութիւնը ինք կ'ընտրէ իր ղեւանը:

307. 11. — Ընտրութեանց ատեն մինչեւ վերջընթեր ամիս առանց բանաւոր պատճառի իրենց անդամատուրքը չի վճարող անդամ մը ընտրող եւ ընտրելի ըլլալու իրաւունք չունի: Յետեւալ տուրքերու գանձումը կը փակուի ընտրութեան ժողովը սկսելէն անմիջապէս առաջ:

307. 12. — Վարչութեան անդամ կրնան ընտրուիլ անոնք որ առնուազն վեց ամիս Կուսակցութեանս անդամ եղած են անընդհատ:

307. 13. — Ակումբի մը վարչութիւնը կրնայ բաղկանալ երեք, հինգ, կամ եօթը անդամներէ:

307. 14. — Ատենապետին պաշտօնն է. վար-

չութիւնը նիստերու հրաւիրել, նիստերուն ատենապետել եւ հսկել ժողովի կանոնաւորութեան:

Պարտիրարար քննել Գանձապահին հաշիւները եւ գործառնութիւնները:

Ատենապետին հետ ստորագրել կարեւոր եւ պատասխանատու պաշտօնաթղթեր եւ նամակներ:

Պահել Ակումբի կնիքը:

Ատենապետին պաշտօնն է. ժողովներու արձանագրութիւնները պահել:

Ատենապետին հետ ստորագրել եւ կնքել բոլոր թղթակցութիւնները:

Աւանդապահը ըլլալ Ակումբի վաւերացողութեան եւ այլ պաշտօնական գրութիւններուն:

Գանձապահին պաշտօնն է.

Տուրքերը գանձել եւ ելեւմուտքի կանոնաւոր հաշիւ պահել:

Առանց վարչական ժողովի որոշումին՝ ոեւէ գումար չի վճարել:

Պահել ծախսուած կամ ղրկուած դրամներու բոլոր արդարացուցիչ թուղթերը եւ ստացականները:

Գանձապահը առանց վարչական ժողովի որոշումին չի կրնար ոեւէ գումար վճարել:

Փոխատենապետ եւ փոխատենադպիր փոխանորդաբար կը վարեն այդ պաշտօնները նոյն իրաւասութեամբ, երբ բանաւոր պատճառով, ատենապետ կամ ատենադպիր չի կրնան իրենց պաշտօնը կատարել:

ՅՕԴ. 15.— Հին վարչութեան հաշիւները ակումբի կողմէն ընտրուած քննիչ յանձնախումբէն

վաւերացուելէ ետք կը յանձնուին նորընտիր վարչութեան:

ՅՕԴ. 16.— Վարչութեան պակասած անդամներուն կը յաջորդեն փոխանդամները՝ առաւելագոյն քուէի կարգով:

ՅՕԴ. 17.— Իւրաքանչիւր Ակումբի վարչութիւն պատասխանատու է թէ իր ակումբին եւ թէ Շրջանային վարչութեան: Ուր որ ենթաշրջանային վարչութիւն գոյութիւն ունի նոյն շրջանի ակումբները պատասխանատու են ուղղակի անոր:

ՅՕԴ. 18.— Ակումբ մը պէտք է հասցէի մասնաւոր տուփ մը ունենայ նամակատան մէջ, անկարելիութեան պարագային ատենապետին հասցէն պէտք է գործածել իբրեւ պաշտօնական հասցէ:

ՅՕԴ. 19.— Ակումբները պարտաւոր են երեք ամիսն անգամ մը կանոնաւոր տեղեկագիր ղրկել Շրջանային վարչութեան, ստորագրուած եւ կրնաքուած դիւանին կողմէն: Այս տեղեկագիրներու պատճենները պէտք է ղրկուին նաեւ ենթաշրջանային վարչութեանց, ուր որ անոնք գոյութիւն ունին:

ՅՕԴ. 20.— Անդամներու հրաժարականները ընդունելու կամ մերժելու իրաւասութիւնը կը պատկանի ակումբի անդամական ժողովին:

ՅՕԴ. 21.— Եթէ կարելի չըլլայ ընկերաբար կարգադրել վէճերը որ կը ծագին ընդմէջ վարչութեան անդամներուն, ակումբի անդամներուն եւ կամ վարչութեան ու ակումբին միջև, անոնք կը յանձնուին Շրջանային կամ ենթաշրջանային վարչութեան, որուն վճիռը բոլոր կողմերուն համար պարտաւորիչ է մինչեւ պատգամաւորական ժողով:

ՅՕԴ. 22.— Ակումբը լուծուած կը համարուի երբ իր անդամներուն թիւը հինգէն պակաս է, մը—

նացեալ անդամները կրնան մօտակայ Ակումբին միանալ եթէ կայ՝ կամ իրենց յարաբերութիւնը պահել Շրջանային Վարչութեան հետ մինչեւ յաջողին նոր անդամներու յաւելումով կրկին կազմել օրինաւոր Ակումբ մը: Լուծուած Ակումբի մը դըրամը եւ դոյքերը ամբողջովին կը վերադարձուին Շրջանային կամ Ենթա-Շրջանային վարչութեան, ուր որ այս վերջինը դոյութիւն ունի:

ԿԱՆԱՆՑ ԱԿՈՒՄԲՆԵՐ

ՅՕԴ. 23.— Տասնեութ տարեկանէն վեր Հայուհիներ կրնան Ակումբներու անդամակցել այդ մարդոց հաւասար իրաւունքներով եւ կը կառավարուին ներկայ կանոնագրի տրամադրութեան համաձայն:

ՅՕԴ. 24.— Անդամուհիները պարտաւոր են վճարել անդամատուրք մը՝ տարեկան երկու տոլար:

ՅՕԴ. 25.— Տեղակաւն պայմաններու համեմատ կիներ կրնան իրենց առանձինն ակումբները ունենալ, առանձինն վարչութիւններով:

ՅՕԴ. 26.— Կանանց Ակումբներ կրնան իրենց պատգամաւորներն ունենալ Պատգ. Ժողովին մէջ, ինչպէս արանց Ակումբներ, միեւնոյն համեմատութեամբ:

ՅՕԴ. 27.— Կանանց Ակումբները եթէ ուզեն կրնան տեղւոյն Արանց Ակումբին հետ խառն ժողով դուժարել եւ միասին ընտրել պատգամաւոր:

ԱԿՈՒՄԲԻ ԺՈՂՈՎՆԵՐ

ՅՕԴ. 28.— Աւետաւան տմիսն անգամ մը տեղի կ'ունենայ Անդամական կանոնաւոր ժողով, որում

գեկոյցը կը հաղորդուի Ակումբի անդամներուն գրաւորապէս, առնուազն հինգ օր առաջ:

ՅՕԴ. 29.— Անդամական ժողովը օրինաւոր կը նկատուի երբ անդամներու մէկ երրորդը ներկայ է:

ՅՕԴ. 30.— Երբ ժողովը օրինական թիւը չի լրացներ, ու երկրորդ ժողովի մը գումարումը տեղի կ'ունենայ երեք շաբթուան ընթացքին, այդ ժողովին ներկայ եղող անդամներուն թիւը օրինական կը համարուի:

ՅՕԴ. 31.— Որոշումները ներկաներու մեծամասնութեամբ կը տրուին եւ պարտաւորիչ են բոլոր անդամներու:

ՅՕԴ. 32.— Ատենապետը իրաւունք ունի արտասովոր նիստի հրաւիրել Ակումբը: Անոր բացակայութեան փոխ-Ատենապետը եւ կամ Վարչութեան անդամներու մեծամասնութիւնը կրնայ ժողով դուժարել: Արտասովոր ժողով ծանուցանող գեկոյցին մէջ պէտք է յիշուի ժողովին տեղը, ժամանակը եւ նպատակը: Այդ մասնաւոր նպատակէն դուրս ուրիշ ոեւէ զործ կամ խնդիր նկատի չառնուիր արտասովոր նիստերու մէջ:

ՅՕԴ. 33.— Ակումբի տարեկան ժողովը կը գումարուի Շրջանակի Պատգամաւորական ժողովէն առնուազն մէկ ամիս առաջ: Այս ժողովին մէջ կ'ընտրուին Ակումբի Պատգամաւորները Շրջանակի Պատգամաւորական ժողովին համար:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՅՕԴ. 34.— Կուսակցութեան Ամերիկայի Շրջանակին ղեկավար մարմինը կը կոչուի Շրջանային Վարչութիւն, եւ կը բաղկանայ 7 կամ 9 անդամներէ, որոնք կը պաշտօնավարեն մէկ տարի, եւ կամ

մինչեւ նոր Շրջանային Վարչութեան ընտրութիւնը :
Հին Վարչութեան անդամներ վերընտրելի են :

30Դ. 35.— Շրջ. Վարչութիւնը կընտրուի տարեկան Պատգամաւորական Ժողովին կողմէն դադարէի քուէով եւ պատգամաւորներու թւոյն մեծամասնութեան ձայնով :

30Դ. 36.— Շրջ. Վարչութեան անդամ կ'ընտրուին անոնք միայն, որոնք առնուազն երկու տարի կուսակցութեանս կանոնաւոր անդամ եղած են անընդհատ :

30Դ. 37.— Վճարեալ պաշտօնեաներ Շրջ. Վարչութեան անդամ չեն կրնար ըլլալ :

Կուսակցութեանս վճարեալ պաշտօնեաները իրաւունք չունին ուրիշ հաստատութեանց մէջ վարչական գործեր ստանձնելու :

30Դ. 38.— Կուսակցութեանս Ամերիկայի Շրջանակին սեպհական չարժուէն եւ անչարժ կալուածները մատակարարելու իրաւասութիւնը կը պատկանի Շրջ. Վարչութեան :

30Դ. 39.— Շրջանային Վարչութիւնը իր որոշումները գործադրելու համար կրնայ նշանակել ներկայացուցիչ կամ յանձնախումբեր, իր անդամներէն կամ իրմէ՛ դուրս կուսակցութեանս ուրիշ անդամներէն :

30Դ. 40.— Շրջանային Վարչութիւնը իր անդամներէն դադարէի քուէով կ'ընտրէ ատենապետ, փոխ-ատենապետ, ատենադպիր եւ գանձապետ :

30Դ. 41.— Տարուան մը ընթացքին եթէ Շրջ. Վարչութեան անդամներէն մէկը կամ աւելին հրաժարին կամ սրակսին անոնց կը յաջորդեն, պատգամաւորական Ժողովին ընտրուած փոխ անդամները առաւելագոյն քուէի կարգով :

30Դ. 42.— Շրջանային Վարչութեան վերին հսկողութեան եւ պատասխանատուութեան տակ կը հրատարակուին կուսակցութեանս Ամերիկայի Շրջանակին պաշտօնաթերթերը եւ ուրիշ հրատարակութիւններ :

30Դ. 43.— Շրջ. Վարչութեան դիւանը կամ իրմէ՛ նշանակուած քարտուղարութիւնը կը կատարէ կուսակցութեանս պաշտօնական բոլոր թղթակցութիւնները թէ՛ շրջանակիս եւ թէ՛ արտասահման գտնուող մարմիններու հետ :

30Դ. 44.— Շրջանային Վարչութեան պաշտօնէ .

Ա.— Գործադրել Պատգամաւորական Ժողովին կողմէ՛ քուէարկուած որոշումներն ու օրէնքները, ինչպէս նաեւ Կեդրոնին հրահանգները ըստ Հիմնական Կանոնագրի տրամադրութեանց :

Բ.— Միջոցներ տնօրինել Կուսակցութեանս գործերուն բարեօք կատարումին, եւ իր տրամադրութեան տակ զրուած գումարներուն արդիւնաւէտ գործածութեան համար :

Գ.— Վարձել ու արձակել Կուսակցութեանս բոլոր պաշտօնեաները, Քարտուղար, Սփրաքիր, Գործիչ, Գործակատար, Ներկայացուցիչ, եւլն. :

Դ.— Պարբերաբար, մասնաւոր շրջաբերականներով, Ակումբները տեղեակ պահել Կուսակցութեանս ընդհանուր գործունէութեան :

Ե.— Քննել Կուսակցութեանս անդամներուն դէմ բերուած ամբաստանութիւնները եւ ըստ այնմ պէտք եղած տնօրինութիւններն ընել :

Զ.— Ի հարկին ստանձնել եւ մատակարարել Ակումբներէն ոեւէ մէկուն պատկանող դրամները կալուածներն ու գոյքերը :

Է.— Յարարերիլի հարկին չըջանակին մէջ գրտնուող ուրիշ ազգային մարմիններու հետ :

ՅՕԴ. 45.— Երջանային Վարչութիւնը իր բոլոր ժողովներուն եւ որոշումներուն արձանագրութիւնները պէտք է յատուկ տետրակի մը մէջ պահէ Դիւանին կողմէ ստորագրուած : Պիտի պահուին նաեւ թղթակցութեանց պատճէնները :

ՅՕԴ. 46.— Երջանային Վարչութեան անդամները հաւաքաբար եւ անհատաբար պատասխանատու են Պատգամաւորական Ժողովին : Անոնք պարտին ներկայ գտնուիլ Պատգամաւորական Ժողովի նիստերուն, եւ Դիւանը Վարչութեան տարեկան գործունէութեան գրաւոր տեղեկագիրը՝ ինչպէս նաեւ Գանձապահին հաշուեկշիռը կը ներկայացնէ ժողովին :

ՅՕԴ. 47.— Երջանային Վարչութեան անդամները կրնան որեւէ Ակումբի կողմէն Պատգամաւոր ընտրուիլ, բայց չեն կրնար քուէ տալ իրենց համարաւորութեան վերաբերեալ խնդիրներու մէջ :

ՅՕԴ. 48.— Երջ. Վարչութիւնը իր տրամադրութեան տակ պէտք է ունենայ Երջանակիս բոլոր Ակումբներուն անդամոց ցանկը քարտի սխտեմով :

ՅՕԴ. 49.— Երջանային Վարչութեան անդամները Պատգամաւորական Ժողովին առջեւ պարտին հաւատարմութիւն ուխտել Կուսակցութեանս սկըզբունքներուն եւ շահերուն հանդէպ :

ԴԻԻԱՆ ԵՐԶԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ՅՕԴ. 50.— Ատենապետը՝ անոր բացակայութեան Փոխ-Ատենապետը, պիտի նախագահէ Երջանային Վարչութեան ժողովներուն, նաեւ պիտի կատարէ ուրիշ այնպիսի պարտականութիւններ, որոնց

համար Վարչութիւնը իրեն հեղինակութիւն կուտայ : Կը պահէ կնիքը :

ՅՕԴ. 51.— Ատենապետը Երջանային Վարչութեան բոլոր ժողովներուն արձանագրութիւնը պիտի պահէ, աւանդապահը պիտի ըլլայ Կուսակցութեան Համաձայնագրերուն, Թղթակցութիւններուն, նաեւ պիտի կատարէ Վարչութեան կողմէն իրեն յանձնուած ուրիշ գործեր :

ՅՕԴ. 52.— Գանձապետը Կուսակցութեան անունով հաշիւ պիտի բանայ դրամատան մը հետ եւ հոն պիտի պահէ Կուսակցութեան անունով եւ անոր համար ստացուած ու հաւաքուած բոլոր դրամները : Գանձապետը՝ իրր երաշխաւորութիւն՝ պարտի տալ երաշխադիր մը (պօստ) : Պէտք է պահէ իր ստացած գումարներուն ինչպէս նաեւ ծախսերուն ճշգրիտ եւ մաքուր հաշիւը : Իր պաշտօնը երբ աւարտի եւ կամ երբ դադրի պաշտօնավարելէ, իր յաջորդին պիտի յանձնէ գրաւոր հաշիւ մը վաւերացուած հաշուեքննիչ յանձնախումբի մը կողմէ, զոր պիտի նշանակէ Երջանային Վարչութիւնը :

ՅՕԴ. 53.— Գանձապետի պօստին քանակը կորուրէ Երջանակին տարեկան Պատգամաւորական Ժողովին կողմէ, եւ այդ առթիւ վճարելի տոկոսը կը հոգայ Երջանային Վարչութիւնը :

ԵՆԹԱ-ԵՐԶԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՅՕԴ. 54.— Կուսակցութեան Ամերիկայի Ակումբները ենթա-չըջանակներու կը բաժնուին աշխարհագրական յարմարութիւններու համեմատ :

ՅՕԴ. 55.— Ենթա-չըջանակի մը Ակումբները պարբերաբար կը գումարեն Երջանակային Ժողով,

որ կ'ըրադի նոյն Երջանակին մէջ Կուսակցութեանս յառաջդիմութեան վերաբերեալ խնդիրներով:

30Դ. 56.— Երջանակային Ժողովը կ'ընտրէ Ենթա-Երջանային Վարչութիւն մը՝ իբրեւ Գործադիր Մարմին նոյն շրջանակին:

30Դ. 57.— Ենթա-Երջանային Վարչութիւնը իր շրջանակին մէջ Ակումբներու զարգացման եւ Կուսակցութեան գործունէութեան ծաւալման համար՝ Երջանային Վարչութեան գործակից մարմինն է, եւ անոր պատասխանատու:

30Դ. 58.— Երջանակային Ժողովը իր Երջանակին Ակումբներուն համար կը գծէ կանոնադիր մը եւ կրնէ ուրիշ տնօրինութիւններ, պայմանաւ որ անոնք չի հակասեն Կուսակցութեան ծրագրին եւ Հիմնական Կանոնադրին, եւ ենթակայ Երջանային Վարչութեան վաւերացման:

30Դ. 59.— Ենթա-Երջանային Վարչութեան ընթացիկ ծախքերուն համար Երջանային Ժողովը կը քուէարկէ պիւտճէ մը որ պիտի հոգացուի նոյն շրջանակի Ակումբներուն կողմէ:

30Դ. 60.— Ենթա-Երջանային Վարչութիւնը պարտաւոր է իր շրջանակի գործունէութեան նըկատմամբ վեց ամիսն անգամ մը կամ պահանջուած ատեն տեղեկագիր ղրկել Երջանային Վարչութեան:

30Դ. 61.— Ենթա-Երջանային Վարչութիւնը իր շրջանակին համար գործիչ կամ խմբագիր կը վարձէ Երջանային Վարչութեան հետ խորհրդակցաբար:

30Դ. 62.— Երջանային վարչութիւնը իրուումը ունի լուծել Ենթա-Երջանային Վարչութիւնը՝ եթէ աս վերջինը Կուսակցութեան սկզբունքներուն և յահելուն անհամապատասխան ընթացքի մէջ գըտնուի: Այդ պարագային Երջանային Վարչութիւնը

ինք կը գումարէ արտասովոր Երջանակային Ժողով մը, նոր Ենթա-Երջանային Վարչութիւն մը ընտրելու համար: Այսպիսով լուծուած Ենթա-Երջանային Վարչութեան մը անդամները վերընտրելի չեն:

ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

30Դ. 63.— Երջանակիս Տարեկան Պատգամաւորական Ժողովը կը գումարուի ամէն Սեպտեմբերի առաջին շաբթուն:

30Դ. 64.— Պատգ. Ժողովը կը կազմուի Ակումբներու կողմէն ընտրուած ներկայացուցիչներէն:

30Դ. 65.— Պատգ. Ժողովը օրինաւոր է երբ ակումբներու մեծամասնութիւնը ներկայացուած է:

30Դ. 66.— Իւրաքանչիւր Ակումբ պատգամաւոր կրնայ ընտրել իր տեղական անդամներէն եւ կամ ուրիշ ակումբի մը պատկանող ընկերներէ:

30Դ. 67.— Իւրաքանչիւր պատգամաւոր կրնայ ներկայացնել միայն մէկ ձայն:

30Դ. 68.— Պատգամաւորներ կ'ընտրուին հետեւեալ համեմատութեամբ: 5էն մինչեւ 50 անդամ ունեցող Ակումբ մը կը ղրկէ մէկ պատգամաւոր, 51էն 100 անդամ ունեցողը՝ երկու պատգամաւոր, 101էն 150 անդամ ունեցողը՝ երեք պատգամաւոր, 151էն 200 անդամ ունեցողը՝ չորս պատգամաւոր, եւ այսպէս իւրաքանչիւր յաւելուածական 50 կամ նուազ անդամի համար մէկ պատգամաւոր աւելի:

30Դ. 69.— Պատգամաւորները Ժողովի դիւանին պէտք է ներկայացնեն դրաւոր յանձնարարական մը, ստորագրուած եւ կնքուած Ակումբի Ատենապետին ու Ատենադպրին կողմէ:

30Դ. 70.— Երջ. Վարչութիւնը Պատգ. Ժողովին գումարման թուականը եւ տեղը կը ղեկուցանէ բո-

յոր ակումբներուն, գրաւորապէս, որոշուած թուականէն առ նուազն մէկուկէս ամիս առաջ:

30Գ. 71.— Երջ. Վարչութեան անդամ մը Պատգ. Ժողովոյ գիւանին ընտրելի չլինար ըլլալ:

30Գ. 72.— Արտասովոր Պատգ. Ժողով կը գումարուի,

Ա.— Երբ Երջ. Վարչութիւնը պէտք տեսնէ:

Բ.— Երբ շրջանակի Ակումբներուն մեծամասնութիւնը գրաւորապէս պահանջ ներկայացնէ օրակարգի միեւնոյն հարցով:

Գ.— Երբ Երջանային Վարչութիւնը կաղմալուծուի:

30Գ. 73.— Արտասովոր Պատգ. Ժողովի ղեկուցումը պէտք է հաղորդուի Ժողովի թուականէն առ նուազն ամիս մը առաջ եւ պէտք է կրէ Երջանային Վարչութեան անդամներուն մեծամասնութեան ստորագրութիւնը:

Զեկոյցին մէջ պէտք է յիշատակել Ժողովին որոշ նպատակը:

30Գ. 74.— Արտասովոր Պատգ. Ժողովները իրենց մասնաւոր նպատակները իրագործելէ յետոյ՝ կրնան ուրիշ խնդիրներով ալ զբաղիլ պատգամաւորներու մեծամասնութեան հաւանութեամբ:

30Գ. 75.— Պատգամաւորական Ժողովը Երջանակի Համարառու եւ Օրէնդէր Մարմինն ու Գերագոյն Ատեանն է՝ եւ իբր ալք.—

Ա.— Կը քննէ պատգամաւորներուն վկայագրերը:

Բ.— Կ'ընտրէ Երջանակի Երջանային Վարչութիւնը եւ անոր փոխանդամները:

Գ.— Կը պահանջէ, կ'ստանայ եւ կը վաւերացնէ

Երջանային Վարչութեան Դիւանին, Գանձապետին եւ ուրիշ պաշտօնեաներուն տեղեկագիրները:

Դ.— Կը քննէ, կը դատէ Երջանային Վարչութեան անդամները եւ կամ ուրիշ ոեւէ պաշտօնեայ եւ ի հարկին կ'արտաքսէ:

Ե.— Կը վերաքննէ Երջանային Վարչութեան վճիռները:

Զ.— Կրնայ բարեփոխել սոյն Կանոնագիրը եւ Կուսակցութեանս Հիմնական Կանոնագրի տրամադրութիւններուն չի հակասող նոր օրէնքներ ու կանոններ գծել, եւ Կուսակցութեանս վերաբերեալ խնդիրներուն մէջ ընել այն ամէն տնօրինութիւնները, որոնք իր իրաւասութեան մէջ կ'իյնան:

30Գ. 76.— Երջանակի Պատգամաւորական Ժողովի որոշումները կը տրուին ներկաներու մեծամասնութեամբ, ի բաց առեալ հետեալ խնդիրները՝ որոնց համար անհրաժեշտ է պատգամաւորներու թուոյն մեծամասնութեան քուէն.

Ա.— Երջանային Կանոնագրին վերաքննութիւնը:

Բ.— Երջանային Վարչութեան եւ փոխանդամներու ընտրութիւնը:

Գ.— Դատական վճիռներ:


Դ.— Պիւտճէի քուէարկութիւն:

30Գ. 77.— Ընդհանուր Պատգամաւորական Ժողովի պատգամաւորներ կ'ընտրուին պատգամաւորներուն թուոյն մեծամասնութեան քուէովը:

ՊԱՏԺԱԿԱՆ ՏՐԱՄԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

30Գ. 78.— Ոեւէ անգամ երբ Երջանային Վարչութեան հրահանգներուն չի հնազանդիր, կամ չի վճարել իր տուրքերը եւ կամ Կուսակցութեանս օրէնքները կ'ոտնակոխէ, կը կախազարկուի, կը դա-

239.2 - 2002



տապարտուի եւ ի հարկին կարտաքսուի տեղական Ակումբի կողմէ:

ՅՕԴ. 59.— Կուսակցութեան սկզբունքներուն դէմ գործող եւ դայթակղեցուցիչ ընթացք ցոյց տուող որեւէ անդամ նախապէս կ'ազդարարուի եւ եթէ ազդարարութիւնը ապարդիւն մնայ՝ ակումբին վճիռով կ'արտաքսուի:

ՅՕԴ. 80.— Այն անդամները որ գիտակցաբար եւ չարամտօրէն Կուսակցութեան գաղտնիքները դուրս կուտան՝ խսպառ կ'արտաքսուին Կուսակցութենէն:

ՅՕԴ. 81.— Եղեռնական ոճիրով եւ զեղծումով դատապարտուած անդամ մը՝ Կուսակցութենէն կ'արտաքսուի:

ՅՕԴ. 82.— Երբ Շրջանային Վարչութեան անդամ մը իր պաշտօնավարութեան շրջանին Կուսակցութեան սկզբունքներուն դէմ դայթակղեցուցիչ ու անհաւատարիմ ընթացքի մը մէջ գտնուի, անմիջապէս պէտք է չէզոքացուի իր պաշտօնէն: Վարչութեան միւս անդամները կը կազմեն ընկերական ատենան մը եւ թոժամեայ վճիռ կ'արձակեն մինչեւ որ Պատգամաւորական Ժողովը այդ վճիռը վերաքննելով վաւերացնէ կամ բեկանէ զայն:

ՅՕԴ. 83.— Պատգ. Ժողովէն դատապարտուած Շրջանային Վարչութեան անդամ մը կ'արտաքսուի նաեւ այն Ակումբէն որուն կ'անդամակցի:

ՅՕԴ. 84.— Շրջանային Վարչութենէն հրաժարող եւ դատապարտուող անձերու մասին կը ծանուցուի տեղային Ակումբներու եւ ուրիշ արտասահմանեան շրջանակներու:

ՅՕԴ. 85.— Ոեւէ անդամի իր Ակումբէն արտաքսման որոշումը կրնայ վերաքննուիլ Շրջանային

Վարչութեան կողմէ՝ եթէ արտաքսուած անդամը իր խնդիրը հերկայացնէ անոր արտաքսման թուականէն մինչեւ իննսուն օր:

ՅՕԴ. 86.— Արտաքսուող ընկերոջ մը յանցանքը ապացուցանող պարագաները պէտք է անմիջապէս հաղորդուի, Շրջանային Վարչութեան:

ՅՕԴ. 87.— Շրջ Վարչութեան հրահանգներուն եւ կարգադրութեան հետող Ակումբ մը առժամապէս կը դադրեցուի ամէն յարաբերութենէ մինչեւ Պատգամաւորական Ժողով՝ որ քննելով խնդիրը վերջնական վճիռը կուտայ:

ԵՐԴՄՆԱԳԻՐ

Կ'ուխտեմ խղճիս եւ Պատուոյս վրայ, յանուն Ազատութեան եւ Հայրենիքիս բոլոր նուիրական սրբութիւններուն, ծառայել Ռաւկավար Ազատական Կուսակցութեան սկզբունքներուն, որդեգրելով անոր դաւանած լազայիս եւ քաղաքական իտէալները:

Կ'ուխտեմ այս վեհ լայրկեանէն սկսեալ, հաւատարիմ անդամ մը ըլլալ Ռաւկավար Ազատական Կուսակցութեան, եւ խղճիմ ու կարգապահութեամբ կատարել իմ վրայ դրուած բոլոր պարտականութիւնները, նուիրելով իմ նիւթական եւ բարոյական կարողութիւններս կուսակցութեան նպատակներուն իրագործմանը համար:

Կ'երդնում ամէն գոհողութեամբ եւ հիարկիս կեանքի գնով, նուիրուիլ Կուսակցութեան. Ազգիս եւ Հայրենիքիս Սուրբ Դատին՝ հաւատարմօրէն պահելով ինձի վստահուած զաղտնիքները:

Վաստկի բախտին արժանանալ եթէ գիտակցաբար եւ չարամտօրէն դրժեմ այս հանդիսաւոր ուխտիս, գոր կը կատարեմ ազատ կամեմքս, եւ ի ներկայութեան գաղափարակից ընկերներու:



ՀՀ Ազգային գրադարան



NL0192547

